ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/64» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 սեպտեմբերի 2026թ.

Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաֆայել Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վարուժան Մելքոնյան, Հայկ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/64» ծածկագրով 27.08.2026թ.-ին հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 07.09.2026թ-ին ժամը 14:00-ին, էլեկտրոնային աճուրդը սկսվել է 08.09.2026թ.-ին ժամը 14:00-ին:

2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակից «ՄՈՆՏԱԼ» ՍՊԸ-ի հայտում առկա էին անհամապատասխանություններ: Հաշվի առնելով N1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «ՄՈՆՏԱԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և վերոհիշյալ մասնակցին տալ շտկման հնարավորություն: Հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Վերոնշյալ մասնակիցը՝ «ՄՈՆՏԱԼ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

2.2 Հանձնաժողովը որոշեց՝ «ՄՈՆՏԱԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

3.1. Հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացրած հայտը և վերջնական գնային առաջարկը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/64» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՄՈՆՏԱԼ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. **Պայմանագիր կնքելու որոշման մասին.**

4.1.Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

4.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/64» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝_____ **Ռ.Հարությունյան**

Քարտուղար՝_____ **Ն.Աբովյան**

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ **Վ. Մելքոնյան**

2. _____ **Հ.Հովհաննիսյան**